

## ԵՐԵՒՈՅԹՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՄԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ.

Անցեալ դեկտեմբեր 22-ին Թիֆլիսում «Մշակ»-ի խմբագրութեան նախաձեռնութեամբ կատարուել է նախկին խմբագիր Գրիգոր Արծրունու մահուան տասնամեայ տարեդարձի յիշատակը եւ բացուել նորա վերայ կանգնած մահարձանը: Այս առթիւ շատ քան զրուեցաւ «Մշակ»-ի մէջ, զրուեցաւ նաեւ ուրիշ լրագիրներում. հոգեհանգիստներն են կատարուել շատ տեղերում, զրական երեկոյթներ կազմուել, ծառեր խօսուել, Արծրունու գրածներից եւ Լէօի «Կիւրակնօրեայ գրոյցներից» կարդացուել. — ապա շտապել են ի հարկէ քոլորի նկարագիրը «Մշակ»-ին ուղարկել տպելու: Այդ ամէնը լաւ. սովորական քաներ են, եկան ու անցան: Սովորական է նաեւ այն, որ ընդհանուր ոգեւորութեան ժամին շմոռացան դարձեալ Մ. Աթոռի միաբանութիւնը նշաւակելու, թէ ինչո՞ւ ուրիշների նման հոգեհանգիստ չկատարեց, ինչո՞ւ չխոստովանեց հրապարակական դրուատներով, որ հանգուցեալ Արծրունին ո՛չ միայն իրրեւ հասարակական գործիչ մե՛ծ է եղել եւ աներեւակայելի արժանիքների տէր, այլ նաեւ հայոց եկեղեցու համար անգուգական քարերար էր: Ի՞նչ արած. երբ հայ հոգեւորականներ եկեղեցու բեմի վերայից իրենց համոզման ու հասկացողութեան հակառակ անհեթեթութիւն չի մնում որ ասեն՝ միմիայն հաճոյ լինելու համար ամբոխի տրամադրութեան ու այդ տրամադրութիւնը յառաջ բերող մի քանի մեծաքերան ստահակների, զարմանալի չէ ամենեւին, որ հետզհետէ պահանջ դառնայ, ստիպել հոգեւորականութեանն իւր ամբողջ կազմով ամէն պատիւ ու ինքնաճանաչութիւն կորցնելու եւ թոյլ տալու ամբոխի այդ ինքնակոչ առաջնորդներին՝ իւր քթից քոնած տանել ուր եւ կամենան: Սովորել ենք շատ այդպիսի քաներ դիտել ու լռել: Լռութեան կտայինք նաեւ այն տխուր

ներույթը, որ մեր խեղճ՝ առաջնորդող գաղափարներից ու ըովանդակութիւնից զուրկ, հասարակական կեանքի մէջ իբրեւ անհասանելի իդէալ է ներկայանում Գր. Արծրունին եւ կուռքեր պաշտելու սովորած իւր երկրպագուներին ոգևորում՝ այն աստիճան, որ դատողութեան դեկը կորցնում են ու սկսում զառանցել՝ «աստուածարել» նորան ու «կիսաստուածներին դասակցել»։ Հարկաւ այսպիսի անհամ ցոյցերի փոխարէն շատ աւելի ցանկալի էր, որ վերջապէս անուանի հրապարակախօսի իսկական արժանիքը, նորա յայտնած մտքերի ուղիղն ու սխալը լրջօրէն քննել ու ճանաչել աշխատէին, եւ մենք առիթ կունենանք, յուսով ենք, այս նկատմամբ մի քանի խօսք ասելու։ Բայց էլի աւելի լաւ է զոնէ Գր. Արծրունին ոգևորութեան առարկայ լինի, քան ո՛չ մի ոգևորութիւն չլինի։ Ոչինչ ընդդէմ՝ չունինք, թո՛ղ ոգևորութիւն նորա երկրպագուները, որչափ հաճելի է իրենց։

Սակայն մեր եկեղեցւոյ սրբութիւնների այն անարգել շահագործումն ու ոտնահարումը, որ տեղի է ունենում՝ յաճախ այսպիսի ոգևորութեանց ըուէներում՝ եւ ամէն շափ ու սահման անցնում է արդէն՝ անուշադիր թողնել ո՛չ մի կերպ չենք կարող եւ ըսուն զայրոյթով պէտք է քողոքենք դորա դէմ։ Եթէ մեզանում մարդիկ, որ ամիսներով եւ տարւով ոտք չեն դրել եկեղեցւոյ մէջ, արհամարհել են նորա ամբողջ կազմութիւնը եւ յանդուգն տգիտութեամբ հերքել նորա հիմնական սկզբունքները՝ դարձեալ եկեղեցին են ընտրում ասպարէզ երկրպագութիւն անելու իրենց կուռքին, հոգեհանգիստ կատարել տալով են յայտնում իրենց արժանագին յարգանքը հանգուցեալ հասարակական գործիչների յիշատակին, դժբաղդաբար ո՛չ մի միջոց չկայ այդ շարիքի առաջն առնելու։ անունով նոքա հայ քրիստոնեաներ են, եւ եկեղեցին հնար չունի որոշելու, թէ ո՛վ պատշաճաւոր երկիւղածութեամբ ու ջերմեռանդ զգացումներով է մասնակցում իւր պաշտամունքին, եւ ո՛վ ձեւի համար՝ արհամարհանքով։ Նա ամէնքին սիրով իւր յարկի տակ է առնում եւ քաւականութիւն տալիս իւր անդամների քարեպաշտական սրահանջներին։ Բայց դորա համար որոշ ժա-

մանակ, յարմարութիւն, օրէնք կայ. ո՞վ իրաւունք ունի նորա ամենամուիրական կարգերն ըստ հաճոյից խանգարելու: Խօսքն այստեղ սովորական դարձած խանգարումների մասին չէ, ինչպէս օր. դատարկ ոտանաւորներ ու լրագրական յօդուածներ կարդալ, եկեղեցւոյ հետ ո՞չ մի առնչութիւն չունեցող կամ ուղղակի նորա սրբութիւնն անարգող ու վիրաւորող ճառեր ասել, սորա նորա պատկերը դնել եկեղեցում. այս անգամ մի անօրինակ ու քնորոշ դէպք ունինք աչքի առաջ,— Գր. Արծրունու յիշատակին Գանձակ զաւառի Բանանց զիւղում կատարուած մի հոգեպարար հանդէս, որի նկարագրութիւնը գտնում ենք «Մշակ»-ի սոյն տարուայ 4 հ.-ում: Ահա նորա առաջին տողերը. «Երէկ, յունուարի 5-ին, երեկոյեան պատարագի վերջում, Բանանցի եկեղեցում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ ի յիշատակ Գրիգոր Արծրունու՝ նրա մահվան ասանամեակի առիթով»:— Լաւ հասկանո՞ւմ ես կարդացածդ, ընթերցող. «յունւարի 5-ին, երեկոյեան պատարագի վերջում»— ծիշտ այն ժամին, երբ եկեղեցւոյ կամարները պէտք է թնդային «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» երգով, Փրկչի ծնունդը աւետուէր աշխարհին, եւ մարդիկ մոռացած, որ մի չնչին հողագնտի վերայ են ապրում, մեղքի, անձկութան, ցաւոց ճահի մէջ՝ սրբազան յուզումով պէտք է միացնէին իրենց ձայնը հրեշտակների երգասացութեան հետ, հրաշալի մանկանը ողջունելու. «Փառք ի քարծնս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», — եկեղեցւոյ պաշտօնեան, աւետարանի քարոզիչը՝ մի «զառամեալ, հինաւորց» քահանայ, աշուղ դարձած բեմի վերայից կանչում է. «Աստուած Գրիգոր Արծրունու անմահ հոգին միշտ լոյս, պայծառ պահի մեր մէջ, մեզ համար, ա՛ ժողովուրդ», — եւ խեղճ, մտածուիւր ժողովուրդը արծազանք է տալիս. «Ամէ՛ն»:— Ի՞նչ կասէք դորան: Գր. Արծրունի չէ՝ մարդկութեան ո՞ր քարերարի, ո՞ր իշխանի, հայրապետի, լուսաւորչի սիրուն արդեօք կարելի է Փրկչի յայտնութեան խորհուրդը խափանել եւ ճրագաւոյցի ուրախութիւնը հոգեհանգստեան սուգի փոխել: Ո՞ւմ իրաւունքն է եկեղեցւոյ Տիրոջն անարգել այդպէս եկեղեցւոյ մէջ:

Շատերը կմտածեն զուգէ. պէտք է պատժել եկեղեցւոյ պաշտօնէին, որ այդպիսի զեղծում թոյլ է տուել: Պէտք է, այո՛. քայց արդեօք իսկական մեղաւորը նա է, եւ նորա պատժուելով չարիքն արմատո՞ւմ դատապարտուած կլինի: Արդեօք նա մի ողորմելի գործիք չէ միայն հասարակաց այն միւլի տրամադրութեան ձեռքում, որ «հինաւորաց», «գառամեալ» ծերունուն երիտասարդացնում, յառաջադէմների ու ազատամիտների դասն է դասում, երբ «Մշակ կազէթը հայոց ազգի, հայ ժողովրդի գլխէն անպակաս ու հաստատ պահել» մտալթէ, եւ փրած անուանում ու քարկոծում քոյրը այլ կերպ շարժողներին, թէկուզ նորագոյն գիտութեան եւ քաղաքա'րթութեան ներկայացուցիչներ լինին: Ամէնից կարեւորն արդեօք այս քարոյական ստրկութիւնը վերացնելն ու գաղափարների անտանելի շփոթութեան մէջ պարզութիւն յառաջ բերելը չէ՞:

«Արարատ»-ի նախընթաց համարում Պարսկահայոց եկեղեցական ու կրթական վիճակի մի անմխիթար նկարագիրը տպուեցաւ: Սակայն կողմնակի աղբիւրներից տեղեկանում ենք, որ զոնէ Արամեան դպրոցի վիճակն այնչափ էլ տխուր չէ, ինչպէս կհետեւէր այդ նկարագրից: Ամենամեծ ծախքը, որ նորա զոյութեան ընթացքում եղել է անցեալ տարի՝ շուրջ 5700 ր. է, եւ թէպէտ ըստ այսմ խիստ համեստ ոռճիկներ են տրուել իրօք ուսուցիչներին, քայց նոցա մէջ կան՝ քացի տեսչից, որ Մ. Աթոռի Ճեմարանն է աւարտել, ուրիշ երեք ճեմարանաւարտներ եւ մի Ճեմարանի դպրանոցական քաժինն աւարտած ու մասամբ ուրիշ տեղ ուսումը կատարելագործած երիտասարդ. միւս ուսուցիչներն եւս ուսուցիչ անունը կրելու անարժան մարդիկ չեն: Դասացուցակի մէջ, եւ ընդհանրապէս՝ աչքի ընկնող թերութիւններ կան ի հարկէ. քայց շրջապատող պայմաններին նայելով պէտք է ասել, որ այստեղ համապատասխան գործ կատարուում է, եւ լաւ գործ: Ուրիշ կլինէր անշուշտ, եթէ Թաւրիզը փոխանակ երկու 5—6 դասարանեան դպրոց ունենալու եւ նորանոր միջ-

նակարգ դպրոցների ծրագիրներ մշակելու, սկսելը միայն մի թաղում՝ կանոնաւոր թեմական դպրանոց եւ միւս թաղի դպրոցը դարձնելը ստորին կարգի, կամ 2—3 դասարանեան. այդպիսով քնական դրութիւն կստեղծուէր, ուժերը կմիանային, եւ շատ աւելի արդիւնք կստացուէր:

Լիւաւայի թաղի դպրոցների հոգաբարձութիւնն եւս «Պարսկաստանի ընդհանուր կրթական գործի վերաբերմամբ» տարածուած աննպաստ կարծիքները հերքելու համար մի գրութիւն է տպել «Մշակ»ի ներկայ թ.-ի 1 հ.-ում\*, որից երեւում է, թէ այդտեղ եւս զոհացուցիչ կրթական ցէնզ ունեցող ուսուցիչներ կան.—սակայն անտէք էլի ի՞նչ զարմանալի ու հրաշալի բաներ են երեւում: Մենք իմանում ենք, որ այս դպրոցները կառավարուում են նորագոյն— ի՞նչ նորագոյն, —ասլապայ, իԱ, իԲ. դարի, դեռ ո՞չ մի եւրոպական ու ամերիկական դպրոց չմտցրած՝ մանկավարժական օրէնքներով: «Դասերի տեւողութիւնը մեծերի համար 45 րօպէ, փոքրերի համար 30, իսկ դասամիջոցները 15—30 րօպէ են նշանակւած. դասերի քանակութիւնն էլ երեխաների տարիքին է յարմարացրւած, մեծերը օրական 5, իսկ փոքրերը 2—3 դասով են պարապում»:—Երեւակայում էք, ընթերցող, ի՞նչ ձիարշաւներ սարքելիս կլինեն այդ օրական 2 երեսուն—ըոպէանոց դասեր պարապող փոքրեր 30 րօպէ տեւող դասամիջոցներում, —մանաւանդ թէ դասերից դուրս, մայրաքաղաք Թաւրիզի փառասնդ տեսարաններով հարուստ փողոցներում. եւ որ գլխաւորն է—որչա՞մի ազատ միջոց կունենան նոցա քաղաւոր դաստիարակները կեանքի քերիքը վայելելու եւ նորա խոր գաղտնիքների մասին խորհելու: Ի՞նչ զարմանք, եթէ նոքա այս վեջին կէտում էլ ծայրասնդ կատարելութեան են հասել: Հոգաբարձութիւնն ի միջի այլոց յայտնում է, թէ Ե. եւ Զ. դասարաններում որ ուսուցիչներն ի՞նչ դասեր են աւանդում: Կրօն, եկ. պատմութիւն եւ ուրիշ այդպիսի հին, փթած բաներ նոցա մէջ որոնելն անմտութիւն է ի հարկէ: Այստեղ Գեորգեան ճեմարանի—ո՞չ ընթացաւարտ\*, այլ շունչը քերանին հազիւ

\* Ի գէպ, մի անգամ եւս յիշեցնում ենք, թէ վերացնել

միայն դպրանոցական բաժինն աւարտած, իննայի եւ Հայսցիգի համալսարանները յիշաւի տեսած—երկսեռ դպրոցների տեսուչ Տիգրան Ռաշմաճեան աւանդում է «Ֆիզիքա, մարդակազմութիւն, հոգեբանութիւն եւ մանկավարժութիւն»․ այստեղ մի «ծրի»․ դօկտօր» ուսուցիչ էլ կայ «Պոլսի բժշկական համալսարանից»․ քայց դորա եւ իրենց ընկերները մնում են ստուերի մէջ, երբ ամբիոն է բարձրանում «օր․ Փուդինեան, ռուսական գիմնազիայից ընթացաւարտ, (որ) իր ուսումը կատարելագործած է ժընէվի համալսարանում, աւանդում է Էվօլիցիա»։—«Մշակ»ի խմբագրութիւնն այս վերջին քառից յետոյ հարցական նշան է դրել․ ինչո՞ւ․ մի՞թէ հարց է նորա համար, թէ «պուդելի մէջ ի՞նչ կայ թագնուած»․ հարց է, թէ այդ «էվօլիցիան» ի՞նչ Էվօլիցիաների, ի՞նչ ազատամտական քարոզութիւնների, ի՞նչ յառաջադիմական շարժումների արձագանք է։ Ինչո՞ւ նա ընդհակառակն չի քացականչում․ ո՞ր Եւրոպ, ո՞ր Ամերիկա․ ի՞նչ պէտք է եւրոպական համալսարանների դռներ մնալել զանազան դրութիւնների «էվօլիցիան» ուսումնասիրելու համար․ ելէ՛ք ամէնքս կրթական արշաւանք կազմենք, դէպի Պարսկաստանի մայրաքաղաքը դիմենք—այնտեղ օր․ Փուդինեան կտայ մեզ՝ բոլորիս առանց սեռի խտրութեան, իսկական մարմնացեալ Էվօլիցիան, բոլոր գիտութիւնների ու քաղաքակրթութեան էսսենցիան։

Վերջին տարիներս մեր մի քանի թերթեր շարունակ բանակոտի մէջ են վրացի հայատեացների հետ, որոնց համար «Իւերիա» լրագիրը կարծես մրցանակ է նշանակել, թէ ո՞վ ամէնից աւելի ծայրահեղ անհեթեթութիւններ կասի

պէտք է վերջապէս այդ տգեղ սովորութիւնը, որով ձեմարանի եւրաքանչիւր դատարանից ելածներին ձեմարանաւարտ են անուանում թէ՛ իրենք և թէ ուրիշները։ Մի՞թէ մինչև այժմ յայտնի չեղաւ, որ ձեմարանի լսարանական բաժնում բան են սովորեցնում և որ շատ մեծ տարբերութիւն կայ այդ բաժինն աւարտողների և սոսկական դպրոցաւարտների, ո՞ւր մնաց թէ թերի և ուրիշ թեմ․ դպրոցներից ելածների մէջ։

Վրաց եւ Հայոց յարաբերութիւնների մասին: Սրտաշարժ է մանաւանդ այն տեսարանը, որով պատկերացնում են նորա սովորաբար այդ երկու ազգերի պատմական անցեալը — Հայն ի սկզբանէ անտի արշինը ձեռին մի խարդախ առեւտրական, կուչ եկած Վրացի ասպետի ասպարի տակ, որ մեծահոգութեամբ պաշտպանում է նորան թշնամուց, ասպրուտի միջոց տալիս իւր երկրում: Եւ փոխարէնը սեւ ասպերախտութիւն միայն զտնում: — Տե՛ղն է մեզ. արդեօք մեզանում եւս մեծամասնութիւնը նման սխալ զաղարար չունի իւր ազգի պատմութեան մասին. արդեօք շատ կրթուած հայեր եւս այն համոզմունքին չեն, թէ իրենց նախնիք անյիշատակ ժամանակներում մի քանի ապիկար թագաւորների եւ իրարտուն քանդող նախարարների ծանապարհ ղնելուց յետոյ՝ օտարների ստրուկն են դարձել եւ սորա նորա դրանք մի կերպ գլուխ պահել, եւ թէ ուրեմն նոցա մասին յիշելն ու նոցա սերունդ համարուելն ամօթ է: Մարդու զայրոյթը բռնկում է, երբ որ մեր պատմութեան ոսկեգիր էջերը թերթելով տեսնում է, թէ ի՞նչ են եղել մեր նախնիք, եւ ինչպէ՞ս ենք հասկանում մենք նոցա, ու հասկացնում ուրիշներին: Ռ՛ւր էին Վրացիք, երբ հայ ժողովուրդը մի անաւարտելի զօրաքանակ էր կազմում՝ արեւմուտքի եւ արեւելքի մէջ տեղ գցուած. ո՛չ միայն Պարսիկներն ու միւս հին ազգերը, այլ նա եւ Արաբիոյ անապատների աշխարհաւեր որդիք չկարողացան նորա զօրութիւնը խորտակել, եւ երբ զարհուրելի պատուհասներ կրելուց եւ ծանր տքնութիւնից յետոյ նա կրկին գլուխ բարձրացրեց՝ ո՞վ գիտէ ինչ կարելորդ դեր պէտք է կատարէր քրիստոնեայ արեւելքի համար Աշոտ հանձարեղ Բագրատունու կազմակերպած ընդարձակ պետութիւնը, որ Կորդուաց լեռներից մինչեւ Կովկասի ստորոտներն էր տարածուում: Եթէ առաջինը չդաւաճանէր նորա բարերարած եւ նորա հպատակ Վրաց Ատրներսէ՛հ իշխանը՝ օրինակ տար ուրիշներին եւս ողորմելի թագերի գնով ծախելու ընդհանուր հայրենիքը թուրք քնաւորներին: Եւ եթէ մէկ ու կէս դար յետոյ իսկական թագաւորը թագը կորցրեց, իսկ նախկին հպատակն իւրը պահեց ու տէր դար-

ծաւ նորա կալուածներին՝ ո՞ւմ շնորհն էր կրկին, եթէ ոչ նոյն հայ քանակի, որ այնքան երկար ժամանակ դիմացաւ թուրք հրոսակների յարձակումներին, մինչեւ նոցա առաջին թափը կոտորուեց. ո՞ւմ շնորհը, եթէ ոչ այն հայ զօրավարների ու զօրագնտերի, որ ուրիշ յարմար տէր չգտնելով այս հիւսիսային քրիստոնեայ իշխանների շուրջը խմբուեցան եւ արեան դաշտում փառաց պատկներ վաստակեցին նոցա համար: Հարց է, այն ծաղկեալ վիճակը, որ ունեցաւ Վրաստանը ԺԲ.—ԺԳ. դարերում, արդեօք աւելի իւր ընկի ժողովուրդի քաջութեանն ու իւր իշխանների պատերազմական հանձարինն է պարտական, թէ այն միակ խոհեմութեանը, որով սոցանից ոմանք իմացան օգտուել Հայոց պատրաստ, դարաւոր փորձութեանց միջ եփուած ոյժից:

Վրացիներն իրենք աւելի հին ժամանակների պատմութիւն չունին. քայց մենք ունինք եւ գիտենք, որ այն դէպքերում, երբ նոքա Հայերին դաշնակից են եղել, մեծ մասամբ իրենց օգնութիւնը ցոյց են տուել—քաջաբար փախչելով պատերազմի դաշտից: Յիշենք այն դէպքը միայն, թէ ինչպէս նոքա Կուրի ափերում մենակ թողին անօրինակ հերոս Մամիկոնեան Մեծ Վահանի զօրքերին՝ յանուն ընդհանուր քրիստոնէութեան սկսուած սրբազան գործը առաջին քայլափոխում՝ իսկ ամենաժանր վտանգի ենթարկելով: Բայց աւելի ընդուն է նոցա դէպի քրիստոնեայ հայ եղբայրները ցոյց տուած մեծահոգութեան մի նմուշն այն օրերից, երբ նոքա նոր նոր էին գլուխ քարճրացնում, մարդու շարք ընկնում: Բերենք պատմչի իսկական խօսքերը\*. «Զայսու ժամանակաւ լուեալ զայն (Տաճիկների զօրանալը ԺԱ. դարի վերջին տարիներին) կիւրասպադատն Դաւիթ՝ առաքէ զզօրս Վրաց ի պաշարումս քաղաքին Խլաթայ: Որոց եկեալ ի ձմեռնային աւուրս **Երգ** թուականիս՝ սրով եւ սովով ներդին զքաղաքն, եւ զեկեղեցին Հայոց, որ արտաքոյ պարսպին եպիսկոպոսարան եւ ուխտի տեղիք լեալ էին յառաջին շինութեանն Հայոց, զուրք յառջն եւ սուրք Գամաղիէլ՝ զայն Վրաց զօրացն զոմս

\* Առողիկ. Ս. Պետերբուրգ, 1885. էջ 268 (Գ. հանդէս, գլ. Խ.):

եւ իջեալսն արարին: Եւ Տաճիկքն ի պարսպէն աղաղակէին,  
եթէ «Զսրբութիւն քրիստոնէից այդպէս առնէք եւ դուք  
քրիստոնեայրդ»: Եւ Վրացեացն պատասխանեալ, եթէ «Մեր  
զՀայ եկեղեցին եւ զծեր մզկիթն միապէս ընդունիմք»: Իսկ  
որոյ շարժեցաւ ցասումս Աստուծոյ ի վերայ նոցա... «Եւ  
յայնմ՝ զիշերի զկնի զատկին ցասումս Աստուծոյ եհաս ի  
վերայ Վրաց զօրուն. եւ ինքեանք յինքեանց փախտաւան  
լինէին ի զիշերի առանց պատերազմի: Զոր իմացեալ տա-  
ճիկ զօրուն եւ քաղաքացեացն՝ հետամուտ եղեալ հարկա-  
նէին ի հարուածս սաստկագոյնս, ի սուր սուսերի մնշելով  
զնոսա»:—Եւ այս պատմողը մի ժամանակակից է, առաս-  
պելներ չի պատմում՝ եւ ոչ մի կանխակալ կարծիք չունի  
հարեւան ժողովուրդի դէմ. ընդհակառակն յաջորդ գլխում  
նկարագրելով Վրաց տարած—հարկաւ այս անգամ Հայոց  
հետ միասին—մի փառաւոր յաղթութիւն՝ նա ամենայն ա-  
նաշատութեամբ հայ քաջերի հետ յականէ յանուանէ յիշում  
է վրացիների գործած քաջութիւնները. ապա խոր յարգա-  
նօք եւ մեծամեծ դրուատներով ողբում է Դաւիթ կիւրպա-  
ղատի մահը, եւլն: Իսկ թէ առհասարակ վրացիների,  
մասնաւորապէս կրօնական խնդիրներում՝ ցոյց տուած ան-  
համբերողութեան հակառակ ինչպիսի ազատ հայեացքներ  
եւ լայնսիրտ վերաբերմունք են ունեցել մեր նախնիք՝ գեղե-  
ցիկ օրինակը տալիս է մեր անուանի վարդապետներից  
մէկը, Մխիթար Գոշ, որի թուղթը հրատարակել ենք «Արա-  
րատ»-ում:

Թումայեանի եւ նորա որդերի մասին շատ բան գրուե-  
ցաւ վերջին օրերս: Ամենեւին յօժարութիւն չէինք ունենայ  
այս խիստ անհաճոյ խնդրին ձեռք տալու, եթէ արդարու-  
թեան պահանջ չհամարէինք մի քանի բան յիշեցնել տա-  
քացած զուխներին:—Գրեթէ քուր այն թերթերը, որոնք  
այսօր խօսք չեն գտնում Թումայեանի արարքները պար-  
սաւելու, եւ նորա խորամանկ շահատակութեան զոհ եղած  
անձերին էլ մէջը խառնելով, հաշիւ չեն տալիս իրենց

երբեմն, թէ ինչ են ասում,—եթէ իրենց տասը տարի առաջ տպուած էջերը պրպտեն, բոլորովին ուրիշ Թումայեան եւ ուրիշ երգ կգտնեն: Առասպել չէ, այլ մեր օրերում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ կատարուած իրողութիւն, որ Մարգուանի բողոքականաց միջնակարգ դպրոցի ուսուցիչ, Զուիցերիայում բարձր կրթութիւն ստացած Թումայեան անմեղ տեղը բանտ տրուեցաւ, ծանր տանջանքներ կրեց եւ արդէն կախաղանի մահուան էր դատապարտուած, երբ իւր կնոջ (Ֆրանսիական գուիցերացի, մի պատուաւոր յայտնի ընտանիքից) եւ նորա ազգականների եռանդուն ջանքերի շնորհիւ կարելի եղաւ անգլիական դեսպանութեան միջոցաւ ազատել նորան անխուսափելի մահից եւ իբրեւ աքսորականի Անգլիա տանել: Այնուհետեւ նա եւ իւր կինը առաջիններից էին, որ 1893—894 թ.-ներին Լոնդոնում եւ ուրիշ մեծ քաղաքներում եկեղեցիների եւ հասարակական ժողովարանների ամբիոնից քարոզում էին անդադար, գրեթէ ամէն երեկոյ՝ առանձին առանձին ժողովների առաջ, Տաճկաստանի հայ ժողովրդի ողբալի վիճակը նկարագրում, գութ շարժում դէպի թշուառները եւ զայրոյթ դէպի նոցա հարստահարողները: Այդ ժամանակ ո՛չ ոքի զգացմունքներին չէր դիպչում, երբ Թումայեան հետը շղթաներ էր տանում, ցոյց տալիս, թէ ինչպէս էին կապել իրեն, ինչպէս տանջել բանտում. բոլորը համարում էին այդ օրինական միջոց՝ կենդանի կերպով նկարագրելու արեան ու արտասուքի աշխարհում տիրող սարսափները. Թումայեանին նկարագրում ու նկարում էին այդպէս շղթայակապ, եւ այդ ամէնը հեռու եւ մօտիկ շրջաններում մեծ տպաւորութիւն էր թողնում, զօրեղ յուզում՝ յառաջ բերում: Մենք, որ աչքով տեսել ենք նորան ու նորա կնոջն այդ ժամանակ եւ լսել նոցա խօսքը՝ ստացել ենք նոյնպէս այն տպաւորութիւնը, որ նորա անկեղծ էին, զուտ քրիստոնէական եւ մարդասիրական մի գործ էին կատարում, հեռու շահախնդրական եւ մարդորոտական նպատակներից: Այժմ, երբ նշաններից այնպէս է երեւում, որ նորա կամ սկզբից եւ եթէ կեղծում էին, կամ յետոյ հետզհետէ վարժուեցան նիւթա-

կան օգուտներ քաղելու իրենց դրութիւնից եւ, իրօք ամենածանր մեղքի մէջ ընկնելով շահագործելու քարութեան ու ողորմածութեան վսեմագոյն սկզբունքները,—նոցա արարքների տգեղութիւնը մերկացնողները գեղեցիկ գործ չեն կատարում՝ այնուամենայնիւ, երբ յարմար առիթ են գտնում՝ այստեղ իրենց անարատ ձեռները հրապարակով լուսնալու։ Հեշտ է քարծրագոչ մեղադրանքներ ուղղել Թումայեանին որքեր յանձնողների հասցէին։ Հարցնող կայ, թէ վերջին տասնեակ տարիների ընթացքում քանի որքեր են պատասպարուել, քանի քաղցածներ սնունդ, քանի մերկեր հագուստ ստացել ս. Էջմիածնի հովանու ներքոյ։ Եթէ Թումայեանի<sup>1</sup> ձեռնարկութեան մասին ստոյգ աղբիւրից մանրամասն տեղեկութիւններ չունեցած եւ միայն նորա նախկին համբաւին վստահելով որքեր յանձնելը մեծ սխալ է եղել, պէտք է չմոռանալ, թէ այդ սխալը գործողները քանի որքերով շրջապատուած են դեռ այս րոպէին եւ քանիսը ետեւից գալիս են, անվերջ, անսպառ։ Սրտացաւ մարդիկ կան, թող նոցա մասին հոգ տանեն, որոնց պատասպարելու եւ տեղաւորելու միջոցները աւելանալու փոխարէն քանի գնում պակասում են։

Կ. Պոլսոյ «Սուրհանդակ» թերթը տեղեկութիւն է ստացել, որ ս. Թադէոս եւ ս. Բարդուղիմէոս առաքեալների տօնին Մ. Աթոռի Ճեմարանում կատարած հանդիսին ի միջի այլոց «միաքանններու մէկ մեծ մասն ալ ներկայ չէ գտնուեր, որովհետեւ Ճեմարանի արդի վարչութեան եւ միաքանններէն ոմանց մէջ անհամաձայնութիւն տիրած է, եւ անոնք որ կքննադատեն ինչ ինչ կէտեր, անոնք շատ քարեկամ չեն նկատուիր Ճեմարանին»։ —Հրճուհւում են արդեօք Եոր—Դարի թղթակիցներն իրենց հանած ծայների արձագանքը լսելով, կարծիւմ են միթէ յիրաւի, որ մասնաւոր անձանց պատիւը չօշափելով հասարակութիւն գուարձացնելն ու Ճեմարանի նման հաստատութեանց վարկը ձգելով ընթերցողների հետաքրքրութիւն գարթեցնելն ազգ-

օգուտ արուեստ է:—Վստահեցնում ենք հետու մօտիկ քոլոր հետաքրքրուողներին, որ Ճեմարանը ապահով ու արդիւնաւոր կերպով շարունակում է իւր գործը, եւ նորա այժմեան վարչութիւնը ոչ յիշեալ հանդիսին եւ ոչ ուրիշ առթիւ ղժգոնութեան պատճառ չի տուել միաքանններին:

Իսկ Գանձասարի պընճահանքի նկատմամբ յառաջ եկած վրդովմունքը նստեցնելու համար կնկատենք առ այժմ, որ պայմանը կնքուելուց առաջ խնդիրը լուրջ քննութեան է առնուել, իրաւաքաննների ու խոհական անձանց կարծիքն իմացուել, աչքի տակ են եղել ոչ միայն քոլոր նախկին առաջարկութիւնները, այլ նաեւ Կովկասեան ուրիշ հանքերի համար կապուած քազմութիւ պայմանագրերի պատճէններ: Մի փոքրիկ թիրիմացութիւն կայ միայն մէջ տեղ: Երբ 20—30 տոկոս էին առաջարկում հանած հում նիւթի տոկոսն էր այդ, մինչդեռ այժմ զուտ արդիւնքի 7 տոկոսն են տալիս, որ պայմաններին նայելով աւելի արժէ վանքի համար, քան թէ հում նիւթի 40—50 տոկոսը: Դորա հետ մէկ տեղ, ուրիշ շատ կողմնակի հանգամանքներ կան, որոնք վանքի համար անհամեմատ աւելի նպաստաւոր են, քան նախկին առաջարկութիւնների մէջ եղածները. եւ թանկագին մետաղներից վանքը պէտք է ստանայ ոչ թէ մէկ, այլ յիսուն տոկոս: Կաշխատենք ուրիշ անգամ աւելի մանրամասն տեղեկութիւններ ու քացատրութիւններ յառաջ քերել այս մասին:

Կ. Վ.

